«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն
Երեւան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219, 094 40 46 24,
E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

27.07.2016
ՀՀ Լոռու մարզպետ
Արթուր Նալբանդյանին

Հարգելի պարոն մարզպետ,

Շնորհակալ եմ, որ մարզպետարանի աշխատակազմը արձագանքել է իմ նախորդ հարցմանը՝ մարզի մոտ երկու տասնյակ համայնքներում կարկտահարությունից կրած վնասի վերաբերյալ: Գնահատելով հանդերձ մասնագետների կողմից կատարած մեծ ծավալի աշխատանքը, պետք է նշեմ, որ մեզ հետաքրքրում է վնասի չափը՝ արտահայտված գումարայինով, այսինքն՝ թե տվյալ համայնքում տվյալ տարում կարկտահարության հասցրած վնասը քանի ՀՀ դրամ է կազմել:

Եվս մեկ անգամ շնորհակալություն հայտնելով համագործակցության համար, կրկնում եմ հարցումը, ակնկալելով տեղեկատվություն՝ դրամով արտահայտված :

Հարգելի պարոն մարզպետ, հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9 և 12-րդ հոդվածների պահանջները, խնդրում ենք տեղեկատվություն տրամադրել այն մասին, թե՝

2012-2016 թվականներին, կարկուտի հետեւանքով որքան վնաս են կրել մարզի հետեւյալ համայնքները.

Գյուլագարակ
Կուրթան
Դսեղ
Գարգառ
Վարդաբլուր
Ագարակ
Լեջան
Կողես

Մեծ Պարնի
Օձուն
Վանաձոր
Հագվի
Մեղովկա
Միխայլովկա
Յաղդան
Ամրակից
Կարմիր Աղեկ
Մղարթ
Արեւածագ
Ծաթեր
Այգեհատ

Խնդրում եմ տեղեկությունը փոխանցել ըստ համայնքների եւ ըստ թվականների՝ առանձին-առանձին:

Կանխավ շնորհակալություն,

«Հետաքննող լրագրողներ» էլեկտրոնային
պարբերականի լրագրող
Գագիկ Աղբալյան